ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№_____ «_____» _____ 2022թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏՈՄՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏՈՄՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕՊԵՐԱՏՈՐ ԸՆՏՐԵԼՈՒ ԲԱՑ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի հասարակական տրանսպորտի միասնական տոմսային համակարգի ներդրման աշխատանքների իրականացման նպատակով և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 58-րդ գլխի 1043-1047-րդ հոդվածներով.

1. Հայտարարել Երևանի հասարակական տրանսպորտի միասնական տոմսային համակարգի ներդրման և ֆինանսական օպերատոր ընտրելու բաց հրապարակային մրցույթ:

2. Ստեղծել սույն որոշման 1-ին կետում նշված բաց հրապարակային մրցույթի գնահատող հանձնաժողով և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:

3. Հաստատել մրցույթի կազմակերպման կանոնակարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

4. Հաստատել մրցութային աշխատանքների գնահատման չափորոշիչները՝ համաձայն N 3 հավելվածի:

5. Հաստատել մրցույթի դիմումի ձևը և տեխնիկական պահանջները՝ համաձայն N 4 հավելվածի:

6. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված մրցույթի հաղթողի հետ կնքվող պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն N 5 հավելվածի:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի վրա:

8. Որոշման կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

X

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN HRACHYA 2302850092

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ